Անձնական տվյալների մշակման քաղաքականություն

1. Հասկացություններ

1.1. Սույն անձնական տվյալների մշակման Քաղաքականության մեջ գործածվող տերմինները ունեն հետևյալ նշանակությունը՝

Քաղաքականություն – Համացանցում https://eye.keygo.io/policy.pdf. հասցեով տեղադրված և հասանելի սույն փաստաթուղթը

Անձնական տվյալներ ՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը

Անձնական տվյալների մշակում՝ անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, ցանկացած տեխնիկական միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ.

Անձնական տվյալների փոխանցում ՝անձնական տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը

Անձնական տվյալների ոչնչացում՝ գործողություն, որի արդյունքում հնարավոր չէ վերականգնել տեղեկատվական համակարգում առկա անձնական տվյալների բովանդակությունը.

Անձնական տվյալների ապանձնավորում՝ գործողություններ, որոնց արդյունքում հնարավոր չէ որոշել տվյալների պատկանելությունը կոնկրետ տվյալների սուբյեկտին.

Անձնական տվյալների անդրսահմանային փոխանցում ՝ անձնական տվյալների փոխանցումն օտարերկրյա պետության տարածք օտարերկրյա պետության իշխանության մարմնին, օտարերկրյա ֆիզիկական անձին կամ օտարերկրյա իրավաբանական անձին

Հարթակ/Կայք- ընդգրկում է https://eye.keygo.io/ru հասցեով վեբ կայքում ներբեռնած բոլոր էջերը

Հյուր – իրավասու և աշխատունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, որն օգտագործում է Հարթակը Կացության վայրի փնտրտուքի և ամրագրման, ինչպես նաև և Կեցության վայրում ծառայությունների մատուցումից օգտվելու համար.

Կեցության վայր – բնակարան, որի միջոցով Կեցության վարի ապահովման ծառայությունների տրամադրելու իրավասություն ունի այդ գույքի սեփականատերը, սեփականատիրոջ լիազորված անձը կամ որևէ այլ կերպ այդպիսի լիազորություն ունեցող անձը և որի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է Հարթակում, և որը հանդիսանում է կեցության ապահովման ծառայությունների առարկա

Իրավատեր– իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձ, ով հանդիսանում է կեցության ապահովման ծառայությունների առարկա հանդիսացող կեցության վայրի սեփականատեր կամ ունի Կեցության վայրի օգտագործման և տիրապետման

իրավունք և ում հաշվին մատուցվում է կեցության վայրի ապահովման ծառայություններ՝ Հարթակի միջոցով

Ամրագրում –Հյուրի կողմից իրականացվող գործառույթ, որն ուղղված է Կեցության վայրի տրամադրման ծառայություններ պայմանագրի կնքմանը՝ Հարթակում համապատասխան հայտի միջոցով

KEYGO – "ՔԻԳՈ ԷՅ ԷՄ" ՍՊԸ , ՀՎՀՀ՝ 01338888, գրանցման համար՝ 271.110.1322542, գտնվելու վայր՝ 0088, ՀՀ, Երևան, Ճիրազի փ 48, բն 31

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Քաղաքականությունը սահմանում է ֆիզիկական անձանց անձնական տվյալների մշակման կարգը և ֆիզիկական անձանց անձնական տվյալների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները:

2.2. Քաղաքականությունը կարգավորում է ընտրական ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ԱՏ սուբյեկտներ) անձնական տվյալների մշակումը:

* Հյուրեր;

* KEYGO կոնտրագենտների ներկայացուցիչներ / աշխատողներ;

Անհատական տվյալների մշակումն իրականացվում է KEYGO-ի կողմից՝ ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին, "Անձնական տվյալների պաշտպանության մասին" ՀՀ օրենքին, KEYGO-ի քաղաքականությանը և այլ լոկալ ակտերին համապատասխան:

2.3. Քաղաքականության ընթացիկ խմբագրությունը մշտապես հասանելի է հասցեով:

2.4. KEYGO-ն իրավունք ունի ժամանակ առ ժամանակ փոփոխություններ կատարել Քաղաքականության մեջ՝ այն համապատասխանեցնելու Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ինչպես նաև անձնական տվյալների մշակման և պաշտպանության կիրառվող եղանակներին: Քաղաքականության մեջ փոփոխություններ կատարելիս KEYGO-ն այդ մասին տեղեկացնում է ԱՏ սուբյեկտներին՝ Քաղաքականության նոր տարբերակի հրապարակման միջոցով: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե հրապարակման պահին այլ բան ուղղակիորեն սահմանված չէ:

3.Անձնական տվյալների մշակման նպատակները

3.1. ԱՏ սուբյեկտների անձնական տվյալների մշակումը իրականացվում է հետևյալ նպատակներով

- Հյուրի կողմից Հարթակի օգտագործման
- KEYGO-ի հետ Պայմանագրերի կազմման և իրականացման
- Վեճերի լուծման;
- Հյուրերին գովազդային նյութերի օգտագործման;
- KEYGO Ծառայությունների որակի բարելավման նպատակով՝ աուդիտի և/կամ այլ ներքին միջոցառումների իրականացման;
- Անձնական տվյալները վճարումները սպասարկող բանկերին տրամադրման
- Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվ իրավական ակտերով սահմանված և/կամ թույլատրվող այլ նպատակներով

3.2. Մշակվող Անձնական տվյալների բովանդակությունը

- Անուն, ազգանուն, հայրանուն;
- սեռ;
- քաղաքացիություն;
- ծննդյան ամսաթիվ, վայր
- անձը հաստատող փաստաթղթի տվյալներ
- հեռախոսահամար
- էլեկտրոնային հասցեների մասին տեղեկատվություն
- վճարման վավերապայմաններ
- մետատվյալներ, cookie-ֆայլերի տվյալներ, cookies-իդենտիֆիկատորներ, IP հասցեներ, բրաուզերի և օպերացիոն համակարգի մասին տեղեկություններ, բջջային սարքի մոդել, ինչպես նաև ծրագրային ապահովման տարբերակներ:

4. ԱՏ սուբյեկտների անձնական տվյալների մշակում

4.1. Անձնական տվյալների մշակումն իրականացվում է KEYGO-ի կողմից՝ ԱՏ-ի սուբյեկտների համաձայնությամբ, արտահայտված ցանկացած ձևով,, որը թույլ է տալիս հաստատել համաձայնություն ստանալու փաստը: Անձնական տվյալների մշակումը կարող է իրականացվել առանց ԱՏ սուբյեկտների համաձայնության՝ բացառապես "Անձնական տվյալների պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն նման մշակումը թույլատրող պայմանների առկայության դեպքում:

4.2. Անձնական տվյալները կարող են ստացվել KEYGO-ի կողմից հետևյալ եղանակով՝

- Տրամադրվել ԱՏ սուբյեկտների կողմից՝ Հարթակից օգտվելիս, այդ թվում՝ համապատասխան էլեկտրոնային ձևերի լրացմամբ, KEYGO-ի հասցեով թղթակցության ուղարկման կամ KEYGO-ի էլեկտրոնային հասցեին էլեկտրոնային նամակների ուղարկման եղանակներով:
- Տրամադրվել ԱՏ սուբյեկտների կողմից՝ այլ եղանակներով;
- Ստացվել երրորդ անձանց կողմից՝ սույն Քաղաքականությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. KEYGO-ն իրավունք ունի հանձնարարել Անհատական տվյալների մշակումը երրորդ անձանց՝ կնքելով այդ անձանց հետ համապատասխան պայմանագիր: Այդպիսի դեպքում երրորդ անձի հետ պայմանագիրը պետք է պարունակի սույն Քաղաքականությամբ սահմանված Անձնական տվյալների պաշտպանության ապահովմանն ուղղված բոլոր միջոցառումների իրականացման պարտավորություն: KEYGO-ն իր հերթին պարտավորվում է իրականացնել վերահսկողություն՝ այդպիսի պարտավորության պատշաճ իրականացման նկատմամբ:

4.4. KEYGO-ն իրականացնում է Անձնական Տվյալների ինչպես ինքնաշխատ, այնպես էլ ոչ ինքնաշխատ մշակում: KEYGO-ն իրավունք ունի իրականացնել Անձնական Տվյալների մշակում հետևյալ եղանակներով՝

- Անձնական տվյալների հավաքագրում,
- Անձնական Տվյալների արձանագրում, կուտակում և պահպանում,
- Անձնական Տվյալների ճշտում (թարմացում, փոփոխություն),

- Անձնական Տվյալների օգտագործումը և փոխանցումը (Տրամադրումը, Թույլատրում),
- Անձնական Տվյալների համակարգում,
- Անձնական Տվյալների ապանձնավորում,
- Ապանձնավորած Անձնական տվյալների օգտագործում՝ վիճակագրական նպատակներով.
- Անձնական Տվյալների արգելափակում
- Անձնական Տվյալների ոչնչացում

4.5. KEYGO-ն չի իրականացնում հատուկ կատեգորիաների Անձնական Տվյալների մշակում՝ ռասայական, ազգային պատկանելությունից, քաղաքական հայացքներից, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքների, առողջական վիճակի, ինտիմ կյանքի վերաբերյալ

4.6. KEYGO-ն կարող է իրականացվել Անձնական տվյալների Անդրսահմանային փոխանցում: . Մինչ Անձնական Տվյալների Անդրսահմանային փոխանցման իրականացումը KEYGO-ն պարտավորվում է հավաստիանալ, որ փոխանցվող օտարերկրյա պետությունը ապահովվում է Անձնական Տվյալների պաշտպանության անձանց իրավունքները: Անձնական տվյալների Անդրսահմանային փոխանցումը այնպիսի օտարերկրյա պետություններ, որոնք չեն ապահովող Անձնական տվյալների համապատասխան իրավունքների պաշտպանություն՝ կարող է իրականացվել՝

- Երբ առկա է ԱՏ Սուբյեկտի գրավոր համաձայնությունը
- Երբ այդպիսի գործողությունը թույլատրվում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով.
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում
- ԱՏ Սուբյեկտի կամ այլ անձանց կյանքի, առողջության, այլ կենսական շահերի պաշտպանության դեպքում, երբ առկա է ԱՏ Սուբյեկտի գրավոր համաձայնությունը ստանալու անհնարինություն

Անձնական տվյալների մշակմանը մասնակցում են KEYGO-ի այնպիսի աշխատակիցները, որոնց աշխատանքային պարտականությունները ներառում են այդպիսի գործառույթը.

5. ԱՏ սուբյեկտների Անձնական Տվյալների մշակման սկզբունքները

5.1. Անձնական Տվյալները մշակելիս KEYGO-ն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

- Անձնական Տվյալները մշակվում են օրենքի պահանջների պահպանմամբ:
- Անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց ԱՏ սուբյեկտի համաձայնության չեն կարող փոխանցվել երրորդ անձանց՝ բացառությամբ սույն Քաղաքականությամբ և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- ԱՏ սուբյեկտների կողմից Անձնական Տվյալների մշակումը թույլատրող համաձայնության հետկանչման, մշակման նպատակներին հասնելուն պես կամ այդպիսի նպատակներին հասնելու անհրաժեշտության դադարի դեպքերում, մշակվող Անձնական տվյալները ենթակա են ոչնչացման կամ

ապանձնավորման՝ եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ

- Անձնական տվյալների բովանդակությունը և ծավալը համապատասխանում են հայտարարված մշակման նպատակներին:
- Անձնական տվյալները մշակելիս ապահովվում է դրանց ճշգրտությունը և մշակման նպատակների համար արդիականությունը:
- Անձնական տվյալներ պահպանումն այն տեսքով, որը թույլ է տալիս իդենտիֆիկացնել ԱՏ Սուբյեկտն, իրականացվում է ոչ ավելի երկար ժամկետով, քան պահանջվում է Անձնական տվյալներ մշակման նպատակներին հասնելու համար, բացառությամբ եթե ՀՀ օրենսդրությամբ կամ այնպիսի պայմանագրով, որի շահառու կամ կողմ է հանդիսանում ԱՏ սուբյեկտը, սահմանված է Անձնական տվյալների պահպանման այլ ժամկետ:

6. ԱՏ սուբյեկտների Անձնական տվյալների մշակման (պահպանման) ժամկետները

6.1.Անձնական տվյալների Մշակման (պահպանման) ժամկետները որոշվում են դրանց Մշակման նպատակներից ելնելով: ԱՏ Սուբյեկտների Անձնական տվյալները Մշակվում և պահպանվում են Հարթակից օգտվելու ողջ ընթացքում, ինչպես նաև վերջին անգամ Հարթակից օգտվելու կամ վերջին Ամրագրման իրականացման պահից, կապված այն հանգամանքից, թե որ իրադարձությունն է եղել ավելի ուշ՝ 15 տարիների ընթացքում:

6.2. Այն Անձնական տվյալները, որոնց Մշակման և պահպանման ժամկետը լրացել է, պետք է ոչնչացվեն կամ ապանձնավորվեն, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

7. ԱՏ Սուբյեկտների անձնական տվյալների պաշտպանության միջոցներ

7.1. Անձնական տվյալների մշակելիս KEYGO-ն ձեռնարկում է անհրաժեշտ իրավական, կազմակերպական և տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնք պաշտպանում են Անձնական տվյալները՝ դրանք ոչ իրավաչափ կամ պատահական հասանելիության տրամադրումից, ոչնչացումից, փոփոխելուց, արգելափակումից, պատճենահանումներից, Անձնական տվյալների ոչ իրավաչափ տրամադրման, տարածման, ինչպես նաև այլ անօրինական գործողություններից:

7.2. ԱՏ Սուբյեկտների Անձնական տվյալները անվտանգության ապահովման համար KEYGO-ն, ի թիվս այլնի, ձեռնարկում է հետևյալ միջոցները՝

- Անձնական իրավական ակտերով սահմանում է Անձնական տվյալների մշակումը կազմակերպող պատասխանատու անձանց:
- Ներքին իրավական ակտերով սահմանում է Անձնական տվյալների մշակման կարգը
- Տեղեկացնում և ծանոթացնում է աշխատակիցներին ինչպես Անձնական տվյալների պաշտպանությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության դրույթներին, այնպես էլ դրանք Անձնական տվյալների մշակումը կարգավորող ներքին իրավական ակտերին:
- Իրականացնում է Անձնական տվյալներին հասանելիություն ունեցող և չունեցող աշխատակիցների հստակ դասակարգում ;

- իրականացվում է Անձնական տվյալների Մշակման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և KEYGO ներքին իրավական ակտերին կանոնավոր համապատասխանության վերահսկողություն

8. ԱՏ սուբյեկտների իրավունքները

8.1. ԱՏ սուբյեկտն իրավունք ունի ստանալու տեղեկություններ իր անձնական տվյալների, տվյալները մշակելու, մշակելու հիմքերի և նպատակների, տվյալները մշակողի, նրա գտնվելու վայրի մասին, ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները:

8.2. ԱՏ սուբյեկտն իրավունք ունի ծանոթանալու իր անձնական տվյալներին, Մշակողից պահանջելու ուղղել, ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար:

8.3. ԱՏ սուբյեկտն իրավունք ունի ցանկացած պահի՝ լրիվ կամ մասնակի, հետ կանչելու Անձնական տվյալների մշակումը թույլատրող իր համաձայնությունը

9. Փոխգործակցությունը

9.1. Ցանկացած դիմում և պահանջ, ներառյալ՝ սույն Քաղաքականության 8-րդ բաժնում նշվածի, ԱՏ սուբյեկտների կողմից ուղարկվում են հասարակ գրավոր ձևով՝ Անձնական տվյալների պաշտպանությունը կարգավորող Հայաստանի հանրապետության գործող օրենսդրությամբ պահանջված տվյալների նշումով՝ 0088, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, **Շիրազի փ 48, բն 31** հասցեով կամ էլեկտրոնային փոստով

Հրապարակման ամսաթիվ՝ info@keygo.io